

ՋԱՊԵԼ ԵՍԱՅԱՆ ԿԱՄ ԲԱՐՁՐԱՁԱՅՆԵԼՈՒ ՊԱՐՏՔԸ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- *Սիլիհտարի Պարտեզները* (ՍՊ) 1935
- *Ինքնակենսագրություն* (Ի) [1933-1937]
- *Ավերակներուն մեջ* (ԱՍ) 1911

ՑԱՆԿ

I. ԼՈՒԻԹՅՈՒՆ ԵՎ ԲՈՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

1. Սովորել լռել
2. Լռելու պրակտիկան
3. Լռություն և լռության ածանցյալներ
4. Ներքին լռություն և համայնքային բռնակալություն
5. Արտաքին լռություն և ռեժիմի բռնակալություն

II. ԽՈՍՔ ԵՎ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1. Քեռի Տիգրանի և Վերգիլե թուրքալուծի վճռական խոսքերը
2. Դպրոցում աշակերտների քննարկումների կարևորությունը
3. Այլ վճռական խոսքեր
4. Նավարկություն դեպի Կենալե

III. ԲԱՐՁՐԱՁԱՅՆԵԼՈՒ ՊԱՐՏՔԸ

1. Խորտակել նախապաշարմունքները
2. Ներկայացնել իրականությունն այնպես, ինչպիսին այն կա
3. Ջախջախել առասպելը
4. Վկայել
5. Օգտակար լինել

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՂՈՒՄՆԵՐ

ՁԱՊԵԼ ԵՍԱՅԱՆ ԿԱՍ ԲԱՐՁՐԱԶԱՅՆԵԼՈՒ ՊԱՐՏՔԸ

Ձապել Եսայանը/ՁԵ (1878-1943) ծնվել է Օսմանյան կայսրության մայրաքաղաք Ստամբուլի ասիական ափին գտնվող Սկյուտար թաղամասում: Նա, որպես կին գրող, որը շատ վաղ է հայտնի դարձել (1908թ. առաջ, այսինքն 30 տարին դեռ չբուլորած), նշանակալից երևույթ է հայ գրականության մեջ: Նույնիսկ նրա կյանքն է բացառիկ, քանի որ նա եղել է հայ ազգի նոր պատմության այնպիսի կարևորագույն փուլերի ներգրավված վկան, ինչպիսիք են համիդյան ջարդերը, հեղափոխական շարժման սկզբնավորումը, Երիտթուրքերի հեղափոխությունը 1908թ., 1909թ. կիլիկյան ջարդերը, 1915թ. հայերի ցեղասպանությունը, Օսմանյան կայսրության անկումը և Հայաստանի առաջին անկախ հանրապետության ծնունդը 1918թ., հայկական սփյուռքի ձևավորումը (նա ապրել է “1900-ականների”, հետագայում 20-30-ականների Փարիզում), Խորհրդային Հայաստանի ձևավորումը 1921թ., ներգաղթը ՀԽՍՀ, որի շրջանակներում նա հայրենիք է եկել 1932թ. վերջին, ստալինյան բռնարարքները և զտումները սկսած 1936թ., որի զոհերից էր հենց ինքը (նա ձերբակալվել է 1937թ. հունիսի 26-ին ԱԿ-ի կողմից և մահացել վեցամյա բանտարկությունից հետո Բաքվի բանտում 1943թ.):

Սիլիհտարի Պարտեզները վեպը, որ նա հրատարակել է Երևանում 1935թ., պատմում է նրա մանկության մասին և հասնում մինչև 1892թ.¹: Նա մտադրություն ուներ շարունակելու այդ երկը և մեզ է հասել դրա անավարտ և թերի ձեռագիրը: Մենք չգիտենք, թե ինչպես էր նա մտադիր վերնագրել *ՄՊ-ի* այդ շարունակությունը, ուստի այն անվանում են *Ինքնակենսագրություն*, որն այնքան էլ հաջողված վերնագիր չէ, քանի որ *ՄՊ-ն* նույնպես ինքնակենսագրություն է²: Հետևաբար նա մեզ թողել է երկու ինքնակենսագրական երկ, որոնք ընդգրկում են նույն ժամանակաշրջանը և, սկսվելով 1878թ., հասնում են մինչև 1895թ. վերջը (*ՄՊ-ն* ավարտվում է 1892թ., իսկ *Ի-ն*՝ 1895թ. դեկտեմբերին):

Ինչ վերաբերում է համատեքստին և շրջանակներին, ապա *ՄՊ-ն* և *Ի-ն* կրկնում են միմյանց, սակայն ոչ շարադրանքի տեսակետից: Սա զարմանալի և նշանակալից երևույթ է: Հաշվի առնելով այն ամենը ինչ ՁԵ-ն վերապրել էր մինչ այդ և “30-ականների” ՀԽՍՀ-ի հեղձուցիչ մթնոլորտը (հատկապես գրողների միջավայրում), ապա այն պահին, երբ նա հրատարակում էր իր հուշերի առաջին մասը (*ՄՊ*), մենք կարող ենք ենթադրել, որ դրանք գրելու և հրատարակելու որոշումը սովորական ցանկությունն էր: Դա պարզապես մանկության հուշերը և իր “ներքին կյանքը” պատմելու մղումն էր (“*Ինչ որ կհիշեմ իմ այն ժամանակի ներքին էությունես, այն է...*”, գրում է նա *ՄՊ-ն* ում, էջ 443): Կրկնության փաստն իսկ, այն, թե ինչպես են այդ երկու պատմությունները, տարբեր լինելով, խառնվում իրար և այն, որ երկուսն էլ ավարտվում են նավարկությամբ, վկայությունն է այն բանի, որ ՁԵ-ն ավելի մեծ հավակնություններ ուներ: Նա ուզում էր ավելի կարևոր, այսինքն հիմնարար բան ասել: Եվ քանի որ նա միաձուլում է իր անձնական և ազգի պատմությունները, ապա մեզ ակնառու է թվում, որ ՁԵ-ն ցանկացել է պատմել ազգի պատմությունը իր սեփական կյանքի միջոցով: Սակայն ի՞նչ պատմություն: Դա իհարկե Պատմությունն է: Ի դեպ ՁԵ ուշագրավ կերպով հոգացել է դրա մասին և ճշգրտել է, որ *ՄՊ-ն* “վեպ” է (մինչդեռ դա այդպես չէ), որպեսզի կանխի դրա զուտ պատմական ընկալումը: Լավ, ազգի պատմություն, սակայն ի՞նչ պատմություն: Քանի որ ձերբակալության հետևանքով ՁԵ-ն չի կարողացել ավարտին հասցնել իր գրական ձեռնարկումը, ապա անորոշ է մնում նրա իրական մղումը: Այդուհանդերձ, դիտարկվող ստեղծագործությունների ուշադիր ընթերցանությունը (*ՄՊ+Ի*) ստիպում է մտածել, որ նա ցանկացել է պատմել ազգի պատմությունը խոսքի ազատության տեսանկյունից: Եվ եթե մենք դիտարկենք այնպիսի ստեղծագործություն, ինչպիսին է *Ավերակներում*

մեջը, իսկ ավելի շուտ դրա *Նախաբանը*³, ապա կտեսնենք, որ նա ընկալում է հայ ժողովրդի պատմությունը որպես դարերի լռությունից հետո խոսքի ազատությանը հասնող ժողովրդի պատմություն: Եվ կտեսնենք նաև, որ այս ընկալումը ուղեկցվում է ինքնին խոսքի և գրողի (աղետը վերապրած հայ գրողի հատկապես) կոչման մասին մտորումներով: Այս ուսումնասիրության մեջ մենք ցանկանում ենք ցույց տալ հենց այդ կողմը. այն է՝ հասնելով հասուն տարիքի (հիսունն անց) և ապրելով վերջապես պետականություն ձեռք բերած իր հայրենիքում, Ձե-ն որոշել է իր անձնական ճակատագրի միջոցով նկարագրել իր ազգի և “գրվածքի” (l’écrit) ճակատագիրը, բոլորն էլ ընկալելով որպես խոսքի կիրառություն:

I. ԼՈՒԻԹՅՈՒՆ ԵՎ ԲՈՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

1. Սովորել լռել

ՄՊ-ում և Ի-ում շարադրանքի նյութը առաջին հայացքից ինքը՝ օրիորդ Ջապել Յովհաննիսյանն է և իր ընտանիքը Ստամբուլում 19-րդ դարի երկրորդ կեսին: Սակայն շարադրանքի քողարկված նյութը հայերն են Օսմանյան կայսրությունում: Հենց սկզբից երևում է ոչ միայն թուրքերի կողմից ժողովրդին պարտադրված լռությունը, այլև համայնքի կողմից իրեն իսկ պարտադրված լռությունը: ՄՊ-ում ցույց է տրված, թե ինչպես են հային մանուկ հասակից “սովորեցնում” լռել, լինի դա տանը, թե դպրոցում: Նախ, արգելվում է խոսել տանն առավոտյան: Ձե-ի հաճախած մասնավոր նախակրթարանում, երեխաներին պատժի սպառնալիքով արգելում էին խոսել, երբ տնօրեն Կարապետ աղան հետկեսօրյա հանգստին էր վայելում. *“Երեխաները չէին համարձակիր նույնիսկ շնչել: Ակամա հազ մը կամ փռկտուք մը սարսուռ կպատճառեր այդ ահաբեկյալ լռության մեջ:”*(ՄՊ, էջ 487): Նույն լռությունն էին պարտադրում տարրական դպրոցում ուսուցիչները *“...որոնց ամբողջ դերը կկայանար մանուկները լուռ և անշարժ պահելու մեջ և այդ նպատակին հասնելու համար, անոնք չէին վարաներ ծեծի դիմելու և երեխաները ահաբեկման ենթարկելու”* (ՄՊ, էջ 495): Այդպիսի դաստիարակությունից հետո հայը, հասունանալով, դառնում էր “լռակյաց”, իսկ հայկական հասարակությունը զուրկ էր ազատ արտահայտվելու ունակությունից:

2. Լռության պրակտիկան

ՄՊ-ի ընթերցանության ընթացքում ապշեցնում է այն լռությունը, որ տիրում է հայկական հասարակության մեջ. կան ցանկություններ, որոնք չի կարելի ցուցադրել (պայմանավորված ամուսնություններ), իրավիճակներ, երբ պետք է լռել (հասարակական պայմանականություններ) և այն, ինչի մասին խստիվ արգելվում է խոսել (արգելված թեմաներ):

- Ամուսնությունը լռության առանցքային տիրույթն է: Ոչ միայն ապագա նորապսակները խոսքի իրավունք չունեն, այլև նրանք խոսք անգամ փոխանակելու իրավունք չունեն իրենց ապագա կողակցի հետ ամուսնանալուց առաջ: Հենց այպես էր եղել Ձե-ի մորական տատիկի՝ տուտու կոչեցյալ Լուսիկի դեպքում 1848թ. *“Տասնչորս տարեկանին զինքը ամուսնացուցեր էին, աճապարելով, “առանց ետև առաջ նայելու”...”*(ՄՊ, էջ 395): Ավելի ուշ (1880 և 1890թթ. միջև) նույն այդ տուտուն նույն կերպ է վարվում իր որդու, Ձե-ի քեռու՝ Տիգրանի հետ. *“հայրս և տուտուն խորհրդակցել էին Տիգրան մորեղբորս մասին: ...պետք էր ոտքը կապել: Եվ հաջողեցան: Շտապով ամուսնացուցին ձկնորս Նիկոթի աղջկան հետ...”* (ՄՊ, էջ 415): Պայմանավորված ամուսնության ավանդույթը այնքան խիստ էր, որ կարող էր բացառել ամուսնությունը սիրո դրդմամբ. *“Երիտասարդներ, որ թերևս իրարու հետ խոսելու առիթ իսկ չէին*

ունեցեր, կբավեր, որ ակնարկներ փոխանակեր էին և սիրո փոխադարձ զգացումե մղված ձգտեր էին ամուսնանալ, կհամարվեին արատավորված: Դեռ մինչև իմ պատանեկական տարիներուս լսեր եմ, որ որոշ մեղադրանքով խոսին ընտանիքի մը մասին, ըսելով թե “անոնք սիրահարվելով ամուսնացած են”: (ՄՊ, էջ 405)

- Բացի դրանից կա լռություն, որը կարգավորում է հասարակական հարաբերությունները: Արևելյան Հայաստանում կա չխոսկան հարսի ավանդույթ, որը հարատևել է մինչև մեր օրերը⁴: Կա հասարակական պայմանականության նմանատիպ մի օրինակ ՁԵ-ի *Երբ այլևս չեն սիրեր*⁵ պատմվածքում, որի գործողությունը ընթանում է Ստամբուլում 1914թ., ուր մայրն ու դուստրը չեն բարևում իրենց եղբորն ու քեռուն եկեղեցուց դուրս գալիս և հակառակը, և այդ ամենը տուրք է պայմանականություններին:
- Եվ վերջապես, կան արգելված թեմաներ: ՁԵ-ի ընտանիքում նշմարվում են երկուսը. էթնիկ և հասարակական բնույթ ունեցող *տաբու*-ներ: Օրինակ, արգելված է հիշատակել հորական պապ Հովհաննեսի սլավոնական ծագումը, որի միջոցով “...իրավամբ “օտար արյուն մտած է մեր ընտանիքի մեջ” “ (ՄՊ, էջ 403): Չի կարելի նաև խոսել հույնի հետ Խաչիկ քեռու ամուսնության և այդ կնոջ մասին ընդհանրապես. “Ինչ որ պատահած էր՝ երկար ատեն գաղտնիք մնաց ինձ: Հետո օր մը լսեցի, մորեղբայրս պարզապես ամուսնացեր էր իր ընտրած և սիրած հույն աղջկան մը հետ”(ՄՊ, էջ 449): Չէր կարելի խոսել նաև ընտանիքի այն անդամների մասին, որոնց հասարակական դիրքը ցածր էր համարվում: Այդպիսով գրեթե լիակատար լռության էր մատնված ՁԵ-ի մորական պապի նախնիների գոյությունը: Պապը հասարակ կառապան էր Շիրին օղլու Հակոբ անունով, որը կառապանների՝ Շիրինենցների ընտանիքից էր:

3. Լռություն և լռության ածանցյալները

Արգելված թեմաները հնարավորություն էին տալիս օտարել անցանկալի անձանց (Հովհաննես պապին, որը “խառն ամուսնության” պտուղ էր, հույն հարսին, կառապան Շիրինենցների ճյուղը): Մերժվածները ոչ մի մեղք չէին գործել, պարզապես նրանք տարբերվում էին մյուսներից: Մինչդեռ տարբերության մերժումը անհանդուրժողականության բանաձևն է: Որքան մեզ հայտնի է այս բառը ՁԵ-ն չի արտաբերել, սակայն հաճախակի անդրադառնում է այդ երևույթին իր գրվածքներում: Այդ տեսակետից բնորոշ է հրեա թիթեղագործի հետ կապված տեսարանը, երբ նրա վրա են հարձակվում թաղի երեխաները ՁԵ-ի տան առջև: ՁԵ-ն ականատես է լինում այդ տեսարանին իր սենյակի լուսամուտից՝ հիվանդ եղած ժամանակ: Երբ նա, ազդվելով այդ տեսարանից և արտասվելով, պատմում է դիպվածը ընտանիքի անդամներին, ապա նրա մեծ մայր Լուսիկը (տուտուն) ոչ միայն չի վրդովվում այդ բռնության և անարդարության դեմ, այլ հանգիստ կերպով արդարացնում է երեխաների արարքը ասելով, որ թիթեղագործը հրեա է. “ – Յավրում, ինչու սիրտդ վեր կհանես, ան յահուդի է... յահուդի... - Եվ որովհետև չհասկանալով այդ բառերուն իմաստը աղիողորմ ակնարկով կնայիմ մեծերուն, մեծ մայրս կբացատրե. - Անոնք Քրիստոսը չարչարեցին, խաչը հանեցին, այդ մեղքն է, որ կբավեն...” (ՄՊ, էջ 426): Ի-ում, երբ դպրոցում խոսում են հայկական ջարդերի մասին, աշակերտուհիներից մեկը կարծիք է հայտնում, որ դա գավառներում ապրող հայերի խնդիրն է և ոչ թե պոլսեցիների. “ -Իսենթ եք, ինչ եք, մտի՞կ կրնեք ատ խոսքերը.. Ես ալ գիտեմ, լսած եմ, բայց այդ բաները մեզի համար չեն, դրսեցիներու համար են:” (Ի, էջ 50): Հրեան, գավառում ապրող հայը ուրիշ են և կարեկցանքի արժանի չեն... Ահա թե ինչ կարելի է սովորել Օսմանյան կայսրության հայկական հասարակությունից: Անտարբերության - անհանդուրժողականության այս թեման առանցքայինն է ՁԵ-ի ստեղծագործություններում և արժանի է առանձին և խորը ուսումնասիրության, քանի որ այն առնչվում է այսօրվա մեր իրականության հետ⁶:

Բավարարվենք այստեղ միայն այդ բանը նշելով և, արձանագրելով դրա կապը լուսության թեմայի հետ, վերադառնանք Ձե-ի ստեղծագործության հիմնական թեմային՝ լուռ հասարակությունն այն հասարակությունն է, որն իր մեջ կրում է բռնության սաղմերը:

4. Ներքին լուսություն և համայնքային բռնակալություն

Եթե կա բռնակալություն, ապա դա նախ և առաջ ընտանեկան բռնակալությունն է: ՄՊ-ում Ձե-ի ներկայացրած գործող անձանցից շատերը լուսաբանում են ծնողների բռնակալությունը: “Ղահճի” օրինակ է Ձե-ի հորաքույր Անիկը, որը *“բռնավոր կին էր, և իր չափահաս զավակները կպահեր իր խիստ հրամաններուն տակ, որ անոնցմե ոչ մեկին թույլ չէ տված ամուսնանալ, որպեսզի օտար մարդ չի մտնե տունեն ներս...”* (ՄՊ, էջ 404): “Չոհի” օրինակ է նրա մորաքույր Յուղաբերը, որը *“տարիներով ցանկություն ունեցած է կարմիր թավիչե հագուստ մը շինելու, ինչ որ անկարելի եղած է տանը մեջ տիրող մայրական խիստ կարծիքին պատճառով:”* (ՄՊ, էջ 411), և նրա ընկերուհի Եվգինեն, որը *“կենթարկվեր անտրտունջ բարբարոս հորը զայրույթներուն:”* (ՄՊ, էջ 524): Հետաքրքրական է այն, որ երբ “զոհերը” համարձակվում են ըմբոստանալ, ապա նրանք այդ բանն անում են զարտուղի միջոցներով, երբեք չեն անում ուղղակիորեն, խոսքի միջոցով, այսինքն նրանց բողոքը համր է: Այդպես է մորաքույր Յուղաբերի դեպքում, որը ճակատի մազափունջը կտրում է և բրնձափոշի է ցանում դեմքին): Իսկ ինչ վերաբերում է նրա ընկերուհի Վերգինեին, ապա նա *“ավելի ըմբոստ էր և իր անկախությունը ապացուցելու համար կդիմեր արտասովոր միջոցներու: Ան կտրել տվավ իր մազերը – ինչ որ շատ անսովոր բան էր այդ ժամանակ – կհագվեր չափազանց պարզ և տղամարդու փողկապ կկրեր (...) Վերգինեն կհամարեր, որ այդ անհրաժեշտ էր խորտակելու համար իր շրջապատի բռնությունը:”* (ՄՊ, էջ 524)

Լուսությունն ուղեկցվում է տնկալությամբ: “1850-ականները” այնքան էլ հեռու չեին, երբ Աբդուլ Ազիզի ժամանակաշրջանում աղջիկներին փակված էին պահում չորս պատերի մեջ: Մեծ մայրը պատմում էր, *“որ այն ժամանակ կիները առհասարակ դուրս չէին ելներ տունեն”* (ՄՊ, էջ 395) և որ նրանք նույնիսկ եկեղեցի չէին գնում և տանն էին աղոթում: Ինչպիսին էլ լիներ այդ տնկալության սկզբնական և օբյեկտիվ պատճառը (կանխել յենիչերների կողմից առևանգված լինելու վտանգը), այդուհանդերձ, այդ տնկալությունը դարձել էր կանոն, որը միջավայրի բռնակալության արտահայտությունն էր: *“Այդ նորահաս աղջիկները առանձին դուրս չէին կրնար ելնել, անոնցմե ոմանք ստիպման տակ էին ամուսնանալու այնպիսի մարդոց հետ, որոնց նկատմամբ ասելություն և արհամարհանք ունեին: Ազատ չէին հագվիլ ինչպես կուզեն, վարվիլ ինչպես հարմար կգտնեն, վերջապես անոնք զրկված էին ամենատարրական ազատություններե և կզգային, որ ուշ թե կանուխ պիտի մտնեին ծնողական ցանկապատին մեջ, ուրկե դուրս գալու և նոր կյանք մը ստեղծելու ցանկությունը ունեցեր էին:”* (ՄՊ, էջ 522)

5. Արտաքին բռնակալություն և վարչակարգի բռնապետություն

Դրսում թուրքի արջն ընդունված էր լռել: Թուրքերի նկատմամբ տածած հիմնավոր անվստահությունը և սուլթան Աբդուլ Համիդի բռնատիրական վարչակարգի ներքո տիրող համընդհանուր վախը այնքան մեծ էին, որ հայկական հասարակության միակ հնարավոր կեցվածքը դրսում՝ լուսությունն էր: Ձե-ն պատմում է այդ տեսակետից շատ նշանակալից երկու պատմություն: Առաջին պատմությանը հանդիպում ենք ՄՊ-ում: Մալթեպեն է՝ Մարմարա ծովի ափին գտնվող հունական մի գյուղ, ուր Ձե-ի ընտանիքը ամառային հանգիստն էր անցկացնում մինչև 1892թ.: Այդ տարի (Ձե-ն տասնչորս տարեկան էր) հարևան տունը վարձակալում էին թուրքեր: Մեծ մայրն էր իր տասնչորս տարեկան թոռնուհուն՝ Ֆազիեյի հետ, որին հաճախ այցելում էր նրա քեռի

Նահաթը: Օրերից մի օր Նահաթը և ՁԵ-ի հայրը հանդիպում են և երկու տղամարդկանց միջև հետաքրքրական մի «զրույց» է տեղի ունենում: «Ձրույց», եթե դա կարելի է այդպես անվանել, քանի որ այն ամբողջությամբ միակողմանի է ընթանում: Թուրքը խոսում է, հայը լռում: Նախ, Նահաթը խոսում է Աբդուլ Չամիդի մասին, որին նա համարում է հայերի և թուրքերի ընդհանուր թշնամին, բռնակալ, որը պատասխանատու է տարբեր ազգերի բազմաթիվ մարդկանց, հատկապես ուսանողների, մահվան համար: ՁԵ-ի հայրը լսում է նրան, սակայն ոչինչ չի ասում: Այնուհետև Նահաթը սկսում է խոսել Անատոլիայի հայերի մասին, ասելով, որ թուրք գյուղացիները տառապում են նույնքան, որքան հայ գյուղացիները և որ այդ խնդրի միակ լուծումը ընդհանուր թշնամու դեմ ջանքերի միավորումն է: Եվ կրկին «Չայրս լուռ կլսեր»: Տեսնելով նրա պահվածքը, Նահաթն ասում է. «Երբ արդյո՞ք մեր և ձեր մեջ կանգնած պատմեչները պիտի քանդվին: Չայրս դարձյալ լուռ մնաց» - գրում է ՁԵ-ն (ՄՊ, էջ 518-519): Ի-ում ՁԵ-ն բերում է իր և իր քեռու միջև կայացած հետևյալ երկխոսությունը. «Կիրակոս աղբար, - կըսես հանկարծ փողոցին մեջ, բարձրաձայն, - ես կը մեռնիմ, բայց իսլամի հետ չեմ ամուսնանար...: Կիրակոս աղբարը կը շփոթի, չորս կողմը կը նայի սարսափած, արդյոք, լսող չեղավ, և գրեթե ինձ սասատելով, կը մրմնջե. «- Ձապելիկ ատանկ խոսքեր մենիր, լսող կըլլա, սյուրգյուն կընեն ինձի...» (Ի., էջ 51)

II ԽՈՍՔ ԵՒ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1. Տիգրան քեռու և Վերգինե Թուրունջյանի վճռական խոսքերը

- Ձեղնահարկի դիպվածը

1888թ. է և ՁԵ-ն տաս տարեկան է: Նա բարձրանում է տան ձեղնահարկը, ուր ոչ ոք չի գնում բացի Տիգրան քեռուց, ուր նա պահում է իր իրերն ու անձնական թղթերը և ուր նա փակվում է ժամեր շարունակ: Այդ օրը քեռին «բացահայտում է» թուրքական բռնությունները, նախ նրան ցույց տալով 1876թ. «բուլղարական դաժանությունները» պատկերող մի լուսանկար: Այնուհետև նա խոսում է մի չերքեզի մահապատժի մասին, որը մահափորձ էր կատարել սուլթան Չամիդի դեմ⁷: Եվ վերջապես, նա բացահայտում է սուլթանների սովորական բռնությունները. «Սուլթանները իրենց արհեստով բռնավորներ են, - ըսավ» (ՄՊ, էջ 444): Չետաքրքրական է ՁԵ-ի արձագանքը. փոքր աղջկան նախ և առաջ ապշեցնում են ոչ թե սուլթանների բռնությունները, այլ հայ հասարակության երեսպաշտությունը սուլթանների պատվին արվող տոնախմբությունների ժամանակ (շատերը ցուցադրաբար զարդարում էին իրենց տների ճակատները կանթեղներով): Մինչ այդ պատանի ՁԵ-ն կարծում էր, որ այդ տոներն ուղեկցող հայերի խանդավառությունը կապված էր սուլթանների բարի գործերի հետ: Նա հայտնաբերում է, որ դա ամենևին էլ այդպես չէ, այլ հակառակը: Այդ հավաքական խաբեության բացահայտումը փոխում է նրան. «Տիգրան մորեղբայրս սերմ մը դրեր էր մտքիս մեջ: Այլևս միանգամ ընդմիշտ տհաճությամբ կլսեի, երբ սուլթանին ծննդյան կամ գահակալության տարեդարձին գովաբանական խոսքերը կըլլային և սուլթանին «արևշատության» համար մաղթանքներ կըլլային:» (ՄՊ, էջ 446)⁸: Մեկ այլ հետաքրքրական հանգամանքն այն է, որ չերքեսին նա ընկալում է ոչ թե որպես զոհ, այլ որպես հերոս. «Ան հանդուզն էր և քաջ ու մեռնել է չէր վախճար...» (ՄՊ, էջ 447): Մի խոսքով պատանի ՁԵ-ի հոգում ծագում են իրար հետ սերտորեն կապված երկու զգացումներ. «ատելությունը դեպի բռնավոր սուլթանները» (ՄՊ, էջ 446) և «անձնագործության հրայրք» (ՄՊ, էջ 447): Այդ պահին իրողությունն այն է, որ նա «հուզմունքի մեջ» է (ՄՊ, էջ 445) և նրա գլխում ծագում են որոշ գաղափարներ, ոչ ավելին: Պետք է նշել, որ այդ պահին չերքեսի լուսանկարը

* սյուրգյուն կընեն - կաքսորեն

նրան այնքան չէր տպավորել, որքան կարելի էր սպասել: Այնուամենայնիվ լուսանկարը նրան բավականաչափ տպավորել էր, որպեսզի նա հիշեր դրա մասին երկու տարի անց մեկ այլ կարևորագույն դիպվածի կապակցությամբ, որը ՁԵ-ն պատմում է *Ի-ում*, որն անվանում ենք Թութունջյանի դիպվածը:

- Թութունջյանի դիպվածը

1890թ. է: Դպրոցում նոր աշակերտուհի է հայտնվում: Դա Վերգինե Թութունջյանն է՝ Բուլղարիայից եկած հնչակյան հայտնի գործչի դուստրը: Նա է, որ հայտնում է աշակերտներին Անատոլիայում իրականացվող համիդյան ջարդերի մասին. *“Վերգինե կպատմեր, որ գավառներու մեջ թուրքերը կկոտորեն հայերը, սվիմներու ծայրը կհանեն երեխաները, կանանց փորը կծեղքեն, ծիծերը կկտրեն և այս կարգի զարհուրելի բաներ: Ես անմիջապես հիշեցի Տիգրան մորեղբորս ցույց տված պատկերը բուլղարներու կոտորածներու մասին, և հոգիս լցվեցավ խառն և շփոթ զգացումներով”*:

“Թութունջյան աղջիկը կպատմեր նաև, որ թուրքերը կուզեն բռնի ամուսնանալ հայ աղջիկներու հետ և այդ նպատակով կստիպեն, որ հայ աղջիկները ուրանան իրենց հավատքը և իսլամություն ընդունեն, իսկ երբ մերժեն, կսպանեն...” (Ի., էջ 50): Նույնիսկ եթե Ի-ի սկիզբը կորել է և, հետևաբար, մենք չգիտենք թե ինչպես էր սկսվում այդ երկը և ինչ կարևոր իրադարձություններ էին զետեղված այդ 230 առաջին էջերում, այդուհանդերձ ակնհայտ է, որ Թութունջյանի դիպվածը կարևոր տեղ էր զբաղում շարադրանքի մեջ և արտացոլում է ՁԵ-ի քաղաքական և ազգային գիտակցության ձևավորման անձնական ուղին: Դա ցնցում էր. *“Այն, ինչ որ կպատմեր այդ աղջիկը, ինձ համար բացարձակ հայտնություն էր: Մինչ այդ, ոչ տունը, ոչ դպրոցը մեզ չէին խոսեր այդ դեպքերու մասին”* (Ի., էջ 50): Տանը, ՁԵ-ի հայրը բուռն է արձագանքում. *“Չայրս անհանգստության նշաններ ցույց կու տա: Ո՞վ է մեզ խոսեր այդ նյութերու մասին”* (Ի., էջ 50): Դա նշանակում է, որ տանը բացի մեր թվարկած արգելված թեմաներից կար ևս մեկը. դա Օսմանյան կայսրությունում հայերի իրական վիճակն էր: Փաստն այն է, որ Վերգինեի պատմածի հետևանքով, *“ուրիշ վարագույր մը կբացվի”* (Ի., էջ 51): Առաջին անգամ ՁԵ-ն գիտակցում է Օսմանյան կայսրությունում, որը նա համարում էր իրենց ընդհանուր հայրենիքը, թուրքերի և հայերի հարաբերությունների իրական բնույթը: Իհարկե, դեռևս չի կարելի խոսել քաղաքական և ազգային գիտակցության ծննդի, այլ պարզապես *“խառն և շփոթ զգացումների”* մասին. (*“և հոգիս լցվեցավ խառն և շփոթ զգացումներով”* (Ի., էջ 52): Այդուհանդերձ *“Թութունջյանի աղջկան խոսքերը առաջին սերմերն էին, որ նետվեր էին իմ մեջ և որոնք կծլեին հակառակ ինձ”*, Ի., էջ 52):

2. Դպրոցում աշակերտների քննարկումների կարևորությունը

Թութունջյանի դիպվածից հետո, քաղաքական հասարակական և ազգային խնդիրները դառնում են դպրոցի աշակերտների կրթոտ քննարկումների նյութը. *“Դպրոցին մեջ նախ Չրանուշին հետ և հետո մանչերուն հետ կը խոսակցեինք մեր լսածները”* (Ի., էջ 52): Դրա համար նախ պետք էր վերացնել սեռերի միջև եղած պատմեչը դպրոցում. *“Դեռ առաջին ամիսներեն, որ մտեր էի Ս. Խաչ վարժարան, հետամուտ եղեր էի կապ հաստատել մանչերու դպրոցին հետ (...): Աղջկանց դպրոցի պարտեզը բաժանված էր մանչերու զբոսանքի պարտեզեն տախտակ դնով մը, որուն վրա կախ կողպանք մը կար: Առաջին օրերուն քանի աղջիկ մը այդ տախտակներու արանքեն հաղորդակցություն հաստատեցին մանչերու հետ: Չտոտ կղբանքը հանեցինք, և դռան շեմին վրա մանչ, աղջիկ կխաղայինք (...)* Չաճախ խաղը կընդհատեինք և կխոսակցեինք”:

(Ի., էջ 53): Պետք է հպանցիկ կերպով նշել, որ ֆեմինիստ չլինելով (*“Ես երբեք ֆեմինիստ չեմ եղած”*, Ի., էջ 61), ՁԵ-ն բնականաբար գործի է դնում ֆեմինիզմը (*“Ես լուծել եմ այդ խնդիրը ինձ համար, Ի., էջ 61*): Մենք

ասում ենք բնականաբար, որովհետև նրա համար կանացի սեռին պատկանելը երբեք անհաղթահարելի խոչընդոտ չէր հանդիսացել և նա երբեք հաշվի չէր առել “ինչ կասեն” բանաձևը. *“երբեք ալ որևէ ուշադրություն չեն դարձուցած այն բոլոր անպատեհություններուն, որ ինձ շրջապատող հասարակությունը իր արմատացած նախապաշարմունքներով, իր կեղծիքով և անբարոյական մտածողությունով կրնար հարուցանել իմ շուրջ”* (Ի., էջ 61):

3. Այլ վճռորոշ խոսքեր

- Տիգրան քեռու և Վերգինե Թութունջյանի խոսքերին և դպրոցի խառը քննարկումներին պետք է ավելացնել այլ վճռորոշ խոսքերի ազդեցությունը, որ ՁԵ-ն լսում է նախ իր հորից, որը սկսած 1890թ. նրա հետ բացահայտորեն խոսում է Օսմանյան կայսրության քաղաքական իրականության մասին. *“երբ հայրս կխոսեր ինձ այն մասին, թե անհրաժեշտ է տապալել բոլոր բռնապետները և հաստատել հանրապետական կարգեր, որպեսզի վերանան առանձնաշնորհյալ դասակարգերը, և արդարություն ըլլա...”* (Ի., էջ 56):
- Դպրոցում որոշ ուսուցիչներ սկսում են սերմանել ազգային ինքնագիտակցություն և քաղաքական կամք: Այդպիսին էր պատմության ուսուցիչ Դավիթ Շաքարյանը և հայոց լեզվի ուսուցիչ Մելքոն Գյուրջյանը: Վերջինս. *“կխոսեր եռանդով և ոգևորությամբ և դուրս գալով դպրոցական ծրագրեն, իր աշակերտները իրազեկ կպահեր հասարակական և ազգային հարցերում”*, առանց թաքցնելու, որ ինքը կողմնակից է *“զինյալ ապստամբության”* հայ ժողովրդի ազգային ազատագրությանը հասնելու համար (Ի., էջ 54): Գյուրջյանը նրանց հրատապ հողվածներ էր կարդալ տալիս, այնպիսի գրական ստեղծագործություններ, ինչպիսիք էին Մկրտիչ Պեշկեպաշյանի պոեմները նվիրված Ձեյթունի ապստամբության հերոսներին⁹ և Ռաֆֆու ստեղծագործությունները, որոնց ընթերցանությունն արգելված էր:
- Ուսումնառության վերջին տարում ՁԵ-ն նախ ծանոթանում է գրող Սրբուհի Դյուսապի հետ, որին նա այցելել էր նրա Բերայում գտնվող տանը իր ընկերուհի Արշակուհու հետ միասին: Այս դիպվածը նա պատմում է ՍՊ-ում¹⁰: Յետագայում 1894թ. նա որոշիչ հանդիպումներ է ունենում Ստամբուլի մտավորական շրջանակներում Տիկին Մատակյանի գրական խմբակը այցելելու շնորհիվ: Այդ ամենը նա պատմում է Ի-ում. *“Ան իր շուրջը հավաքած էր ինչ որ արժեք մը կներկայացներ այն ատեն Թուրքիո մայրաքաղաքին հայ մտավորականներու մեջ և իր սալոնը դարձած էր հայ ազգայնական գործունեության կարևոր օջախներեն մեկը”* (Ի., էջ 68): Այդ խմբակը հավաքվում էր յուրաքանչյուր շաբաթ օրը երեկոյան և այնտեղ կարելի էր հանդիպել Արշակ Չոբանյանին, Արփիար Արփիարյանին, Հովհաննես Շահնազարին, Տիգրան Կամսարականին, Լևոն Բաշալյանին, այսինքն *Հայրենիք* ամսագրի ամբողջ անձնակազմին: Ի դեպ ՁԵ -ի հայրը ստանում էր այդ ամսագիրը առաջին իսկ համարից, որը լույս էր ընծայվել 1891թ., և դստերը այն կարդալ էր տալիս:
- Եթե այդ երիտասարդությունը շատ հեշտ հարում էր այդ ազգային շարժմանը, ապա դա տեղի էր ունենում ոչ թե առաջադեմ գիտակցության գալու արդյունքում, այլ այն պատճառով, որ հեղափոխական շարժմանը հարելը էմանսիպացիայի միջոց էր, որին կարող էին դիմել մասնավորապես երիտասարդ աղջիկները. *“Յետաքրքրական է այն բանը, որ այդ ընկերուհիներես ոչ մեկը չէր գրավված ազգայնական պրոպագանդեն: (...) Բայց եթե այդ աղջիկներեն մեկը համոզված ըլլար, որ հնչական գրվելով (...), կարող պիտի*

ըլլա խորտակել հորը կամ ընտանիքին ուրիշ մեկ անդամի մը բռնապետությունը, այդ կըրներ։” (ՄՊ, էջ 525): Հակառակ իր ընկերուհիներին, ՁԵ-ի հարունը ազգային շարժմանը ոչ թե կարիքի թելադրանք էր, այլ առաջադեմ գիտակցությանը գալու հետևանք: Ի-ի վերջում, 1895թ. մենք արձանագրում ենք, որ, չնայած ներքին զարգացման հագեցվածությանը, ՁԵ-ն դեռևս չէր հասել քաղաքական և ազգային գիտակցության անհրաժեշտ աստիճանին և դեռևս մնում էր զգացմունքային և հուզական փուլում. “մղված իմ մեջ բարձրացող հուզմունքներե(...)չէի կարող դեռ բանաձևել իմ մտքերս” (Ի., էջ 57): Ինչպես միշտ, նրա ներքին ճամփան արտացոլում է հայ հասարակության ներքին վիճակը և հայ “գրվածքի” զարգացման ընթացքը ինքնագիտակցման, այսինքն արտահայտվելու ազատությանը հասնելու փուլում: Ուստի պետք չէ զարմանալ (չնայած որ ինքը զարմանում է), որ 1895թ. ՁԵ-ի հրատարակած ստեղծագործությունները դեռևս քաղաքական և ազգային չեն. “Ձարմանալի է, որ հակառակ դպրոցի մեջ կրած ազդեցություններուն, իմ պատանեկան առաջին գրություններուս մեջ չեմ մտցուցած հայրենասիրական մտտիվը” (Ի., էջ 57):

4. Նավարկություն դեպի Կենալե կղզին

ՄՊ-ն ավարտվում է առանձնահատուկ մի տեսարանով՝ նավարկությամբ դեպի Կենալե կղզին, որը Ստամբուլի ծովափին էր: Երբ 1892թ. ՁԵ-ն ավարտում է վարժարանը ընտանիքը մտածում է նրա հետագա անելիքի մասին: “Այդ խնդիրը դեռ չէր վճռված, երբ օր մը հայրիկիս հետ Գընալը կղզի գացած միջոցիս, շոգենավին մեջ ծանոթացա թովմաս թերզյանին:” (ՄՊ, էջ 528): Վերջինս մոտենում է նրանց և արտահայտվում. “Ան իր զարմացումը հայտնեց, որ հայր ու աղջիկ իրար հետ կխոսակցեին եռանդով: Կարծեցի որ հույն եք, - ըսավ, - և ահա լսեցի, որ հայերեն կխոսիք: Ասիկա շատ հազվադեպ բան մըն է:” (ՄՊ, էջ 529):

Առանց կառչելու այս հատվածի բովանդակության հարստությանը, մենք կարճանագրենք հետևյալը. երկխոսության բացակայությունը հայկական հասարակության բնորոշ գծերից մեկն էր, քանի որ այս հատվածից պարզ է դառնում, որ հույները տարբերվում էին հայերից: ՁԵ-ի մեզ հղած ուղերձը ճիշտ հասկանալու համար կարևոր է, որ շարադրանքն ավարտվեր այս թեմայով: Ավելին, ՄՊ-ի վերջին նախադասությունն ուղղակիորեն վերաբերում է ազատ արտահայտվելու իրավունքին. “Իմ ախորժակս մեծ էր, ձգտումներս բազմազան և իմ լարված էությունս առիթ կփնտրեի ինքզինքը արտահայտելու, շռայլությամբ և հրայրքով:” (ՄՊ, էջ 529): Վերջապես նշենք, որ նավարկությունը Կենալե կղզին ուղղակիորեն ազդարարում է իր նավարկությունը դեպի Փարիզ, որը տեղի կունենա երեք տարի անց և որով ավարտվում է Ի-ն. “Եվ 1895-ի դեկտեմբեր ամսին, Պաքետ-ի Յունոն շոգենավով մեկնեցա Ֆրանսա” (Ի., էջ 74): Արտասահման այս ուղևորությունը ճամփա է դեպի նրա կյանքի նոր փուլը, դեպի արտահայտվելու ազատության ամբողջական ձեռքբերումը և մուտք գրական ասպարեզ:

III. ԲԱՐՁՐԱԶԱՅՆԵԼՈՒ ՊԱՐՏՔԸ

Արտահայտվել, սակայն ի՞նչ ասելու համար: Ինչի՞ն պետք է ծառայի խոսքի այդ ազատությունը: ՁԵ-ն շատ հստակ պատասխանում է. վերացնել նախապաշարմունքները, ցույց տալ իրականությունն այնպես, ինչպիսին այն կա, ջախջախել առասպելը, վկայել, այսինքն “օգտակար գործ” անել:

1. Վերացնել նախապաշարմունքները

* խոսքը “Պաքետ” ֆրանսիական ծովային ընկերությանը պատկանող “Յունոն” շոգենավի մասին է:

Գրողի առաքելություններից մեկը նախապաշարմունքները վերացնելն է: Համենայն դեպս սա կարելի է հասկանալ տաս տարեկան Ջապելի և նրա հոր միջև երկխոսությունից, որը կայացել էր արդեն հիշատակված հրեա մետաղագործի հետ պատահած դիպվածից հետո. “- *Ճիշտ է, որ յահուդիները գեշ են:(...)*”

- *Աղջիկս, չկա գեշ ժողովուրդ այս աշխարհիս վրա: Կան գեշ մարդիկ և լավ մարդիկ:*

- *Հասպա թուրքե՞րը:*

- *Նույնպես:” (ՄՊ, էջ 426-427):*

Այս դիպվածն ավելի շատ բան է ասում, քան հանդուրժողականության մասին ամբողջ մի դասախոսություն: Եթե “*աշխարհիս վրա չկա գեշ ժողովուրդ*” և եթե “*կան գեշ մարդիկ և լավ մարդիկ*”, դրանից հետևում է, որ հայ ժողովուրդը “*ինքնին*” ավելի լավը չէ, քան թուրք ժողովուրդը: Եվ նաև, որ չարիքը, չլինելով ոչ հրեական, ոչ թուրքական, կարող է լինել նաև հայկական: Այսինքն, չարիքը չի գալիս պարտադիր կերպով օտարներից: Չարիք կարող են պատճառել նաև յուրայինները՝ հայերը հենց իրենց նկատմամբ: Անկասկած, ՁԵ-ն բացահայտորեն չի գրում դա, սակայն նա բավականաչափ խոսում է հայ հասարակության “չարության” մասին, որպեսզի մենք հասկանանք մետաղագործի փոքր պատմության բոլոր բարոյական դասերը:

2. Պատկերել իրականությունն այնպես, ինչպիսին այն կա

Գրողի մեկ այլ առաքելություն, որը բխում է առաջինից. քողագերծել առասպելները: Այդ բանն անելու համար պետք է իրականությանը ուղղակի նայել, իսկ հետո անկեղծորեն ասել այն, ինչ կա: Իսկ իրականությանը ուղղակի նայելը նշանակում է տեսնել, որ հայ ժողովուրդը առասպելի տիրապետության տակ է. իսկ դա ասելը նշանակում է քողագերծել առասպելի աղետալի հետևանքները:

Այստեղ խոսքը գնում է հայ ժողովրդի Պատմությունից եկած ազգային առասպելների մասին: Այդ տեսակետից *Ի*-ն պատմում է հայերի շրջանում առասպելի ձևավորման մասին: ՁԵ-ն նկարագրում է, թե ինչպես են ազգայնական կուսակցությունները (հատկապես Հնչակյան կուսակցությունը մինչև 1895թթ., իսկ հետագայում Դաշնակցությունը) ստեղծում հայերի առասպելական պատմությունը և թե ինչպես է այդ առասպելական պատմությունը զարգանում այն աստիճան, որ գրավում է ոչ միայն ամբողջ պատմական դաշտը, այլև ամբողջ հայկական իրականությունը. “*Գրական, կրթական և հասարակական խնդիրները անտարակույս սերտ կապկապակցություն ունեին ազգայնական շարժումին հետ*” (*Ի.*, էջ 70): Առասպելի կողմից հայկական կյանքի այդ զավթումը ծնունդ է տալիս տարօրինակ շրջադարձների, քանի որ այն ամենը ինչ մինչ այդ արհամարհված էր, հանկարծ արժևորվում է, իսկ այն, ինչ արժևորվում էր դառնում է արհամարհանքի առարկա: Դա տեղի է ունենում և՛ ընտանեկան, և՛ հասարակական ասպարեզներում: ՁԵ-ի մոտ դա բերում է Շիրինյանների մայրական ճյուղի փառաբանմանը, “*նետվող, ամեն բանի խառնվող, ինքզինքնին վտանգի դնող մարդիկ եղած էին:*” (*ՄՊ, էջ 436*): Տիգրան քեռու (Կանկանի) միջնորդությամբ Շիրինենցները ի վեիջո օրինակելի են դառնում ազգի համար.

“*Բայց ավելի հաճախ Կանկան կավաղեր իր սերունդին անզորությունը: - Շիրինին թռռներն ենք պե՛... Ո՞վ կըսեր, որ այդ դաբլանի պես մարդեն մեզի պես կատուներ պիտի մնային... Մենք ալ մարդ ենք պե՛...” (ՄՊ, էջ 414):* Կառապան նախնու փառաբանումից նա անցնում է ավազակի փառաբանմանը, որը ներկայացվում է որպես ֆիդայու կերպարի նախորդը. “*Կպատմեր և ուրիշ քաջերու մասին, որոնք ըմբոստացած տիրող “անարդարություններեն” լեռը քաշված և էշկյա դարձած էին:*” (*ՄՊ, էջ 414*): Իսկ ՁԵ-ն գրում էր այն ժամանակ (սովետական շրջան), երբ դաշնակցական ֆիդային հավասարեցված էր ավազակին: Եվս մեկ շրջադարձ: ՁԵ-ի այդ պնդումներն ու նման զուգահեռները չեն կարող պատահական լինել: Այստեղ

Ուստի մեզ ասում է, որ ինքը եղել է բոլոր այդ առասպելների ստեղծման, ձևավորման և փոխակերպման վկան: Որ դա միշտ նույն առասպելական պատմությունն է:

Ձե-ի պատմանեկության տարիներին այդ առասպելը բերում է Օսմանյան կայսրության վիլայեթներում ապրող գավառական հայի արժևորմանը և Կոնստանդնուպոլսում ապրող հայի արժեզրկմանը: Գավառական հայի իդեալականացումը զուգորդվում է հենց գավառի իդեալականացմամբ, որը նույնացվում է Երկրին, ի տարբերություն Ստամբուլի, որը պարզվում է կեղծ մայրաքաղաք է (արևմտահայության համար). *“Աստիճանաբար “դրսեցիները” սկսան հարգ ու վարկ ստանալ մեր մտքերում մեջ: Անոնք, մեր երևակայության մեջ, կարող էին հասնել հերոսության, անձնուրացության առասպելական աստիճաններու: Մենք ամոթով էինք, որ պոլսեցի էինք”* (Ի., էջ 55): Գավառական հայերի հետ միասին հայերի անցյալն է արժևորվում հասնելով առասպելական բարձունքների. *“Մելքոն Գյուրջյանը (հայոց լեզվի ուսուցիչը) մեզ ասում էր. “Դուք անարժան և այլասերած շառավիղներն եք գերադաս արիական ժողովուրդին, որ մեծ արքաներ, մեծ գորավարներ, աշխարհակալ արքայից արքաներ տվեր է”* (Ի., էջ 55): Դպրոցում ազգային պատմության դասընթացը դառնում է ամենակարևորը: Պատմության ուսուցիչ վանեցի Դավիթ Շաքարյանը *“մեզ կխոսեր մեր պատմության առասպելական շրջանի քաջերու և արիներու մասին: Հոտզհետե ոգևորությունը կաճեր իր մեջ”* (Ի., էջ 58):

3. Ջախջախել առասպելը

Առասպելի հետևանքն այն է, որ այն ծնունդ է տալիս պատմության և կյանքի երկակի և պարզունակ ընկալմանը – հերոսներն ու հերոսական դիպվածները մի կողմ, իսկ դավաճաններն ու դավաճանությունները մյուս կողմ – ընկալում, որի հետևանքներն աղետալի են թե՛ մտքի, թե՛ պատմության համար: Ստածողության տեսակետից առասպելին տուրք տալը առաջացնում է մտածողության և քննադատական մտքի արգելակում, քանի որ անհնարին է դառնում մտածել այն տերմիններով, որոնք խույս են տալիս երկբևեռայնությունից: Բացի այդ ինչպե՞ս հաջողել կասկածի տակ առնել առասպելը: Լավագույն դեպքում մի առասպելը փոխարինվում է մյուսով (ինչպես տեսանք ավազակի դեպքում): Հետևանքն այն է, որ պատրանքն ու երազը փոխարինում են ազատ և առողջ մտածողությունը և սթափ դատողությունը: Ի-ում մտածողության ոչնչացման նկարագրությունների պակասը չի զգացվում. *“մենք շնչասպառ կհետևեինք իր խոսքերուն և հեքիաթունակ դեպքերուն ներկայացուցած հաղթանակներով կհպարտանայինք: Երբեմն ժամերով կմնայինք այդ պատմություններու ազդեցության տակ և հաջորդող դասերուն մյուս ուսուցիչները մեզ կզտնեին երազուն, անուշադիր, բացակա”* (Ի., էջ 58): *“... մեր երևակայությունը սրարշավ և ապերասան երիվիրի մը պես կսուրար դեպի անժանոթ հորիզոններ, դպի կործանում և անդունդ, բայց այդ մասին դեռ չէինք կարող նույնիսկ կասկածիլ, և քանի-քանի երիտասարդ կյանքեր, հետզհետե կորսնցնելով իրականության զգացումը, թեթև սրտով և թեթև վարկով պիտի նետվեին վտանգներով և արկածներով լի գործունեության մը մեջ, և մահը պիտի գտնեին միայն: Միայն մահ և ավերակ, չարաբաստիկ հաշվեկշիռ, եղեռական և արյունոտ արկածախնդրություն”* (Ի., էջ 56): *“միայն մահ և ավերակ”*... Մենք հասնում ենք դրան. մտածողության կոլեկտիվ ոչնչացումը աղետալի հետևանքներ

*էշկյա : ավազակ

ունի ոչ միայն հենց մտածողության համար, այլև հայ ժողովրդի ճակատագրի և գրականության համար. *“Եվ հայ ազգայնականները, փոխանակ սթափվելու այդ*

չարագուշակ երևույթներեն, կմտնեին նոր-նոր արկածախնդրություններու մեջ” (Ի., էջ 72): “Առատորեն հոսող արյունը թափել էր ապարդյուն, բայց ազգայնական կուսակցությունները չէին սթափեր, ընդհակառակը: Այդ միջոցին է, որ դաշնակցությունը կպատրաստեր Բանկայի դեպքը”(Ի., էջ 74): Օսմանյան բանկի գրավման Դաշնակցության 1896թ. օպերացիան ն դուրս է մնում շարադրանքի շրջանակներից և այստեղ պարզապես հիշատակված է որպես ապագա աղետների նախաբան (1895-1896թթ. համիդյան ջարդեր, 1909թ. կիլիկյան ջարդեր, 1915թ. ցեղասպանություն): Մենք արդեն առիթ ունեցել ենք նշելու, որ Ի-ի շարադրանքն ավարտվում է 1895թ դեկտեմբերին: Այսինքն մենք չունենք աղետների նկարագրությունն ու մեկնաբանությունը, որոնք, հավանաբար, պետք է բերեին հաջորդ փուլին: Պատճառն այն է, որ այն կորել է, կամ չի գրվել (հիշեցնենք, որ Ի-ի ձեռագրի վրա կա “հատոր 1” գրառումը և դա ենթադրում է շարունակություն): Ի՞նչ էր ասելու մեզ Ձե-ն իր երկի “շարունակության” մեջ: Մենք կարծում ենք, որ նա կնկարագրեր գոնե ազատությանը ձգտող հայ հասարակության մեջ խոսքի ծաղկման, ինչպես նաև Ազգային շարժմանը այդ խոսքի լիակատար ենթարկման փուլերը: Իսկ այնուհետև նա կհասներ հենց աղետի մեկնաբանությանը, որը կուղեկցվեր առասպելը ջախջախելու անհրաժեշտության մասին գաղափարով, մի գաղափար որ հարազատ է նաև Չարենցին: Սրանք, բնականաբար, ընդամենը ենթադրություններ են: Սակայն *Ավերակներուն մեջ*-ի շնորհիվ, մենք կարող ենք ընդգրկել աղետի շրջանը (1909), ընդհուպ մոտենալով Մեծ Աղետին (1915): Ծագում է հետևյալ հարցը. ի՞նչ պետք է անի գրողը աղետին բախվելով: Պատասխանը պարզ է՝ վկայել:

4. Վկայել

1908թ. Երիտթուրքերի հեղափոխության և սահմանադրական կարգի հռչակման պահին Ձե-ն Փարիզում է: 1909թ. գարնանն իր ընտանիքը տեղափոխում է Ստամբուլ: Նա Ստամբուլում է, երբ տեղի են ունենում “Ադանայի ջարդերը” Կիլիկայում, ապրիլի երկրորդ կեսին: Դա ցնցում է: Չկարողանալով անտարբեր մնալ կատարվածի հանդեպ և որևէ բան անելու կարիքը զգալով, նա, հունիսի վերջին, այսինքն իրադարձություններից երկու ամիս անց, մեկնում է հանցագործության վայրը (Ադանա) որբերի մասին հոգ տանելու համար: Հայկական Կարմիր Խաչի և Հայոց պատրիարքության կողմից նա նշանակվում է Կիլիկիայի որբանոցների տնօրեն: Հաշվի առնելով նրա հանդիպումները ջարդերին վերաբերող խորհրդարանական լսումների հանձնաժողովի անդամների և թուրքական ռազմական դատարանի ներկայացուցիչների հետ, նա լիովին տեղեկացված է իրավիճակին: Հետևաբար այն ամենը, ինչ նա գրել է *Ավերակներուն մեջ* – ում առաջնակարգ աղբյուր է ջարդերից անմիջապես հետո Կիլիկիայում հայերի վիճակի մասին: Այս գրվածքով է սկզբնավորվում վկայության ժանրը հայ գրականության մեջ: Եթե չենք սխալվում, ապա սա, միգուցե, վկայության ժանրի ծնունդն է հայ գրականության մեջ. “*Անհրաժեշտ է, կկրկնեն, որ ամենքս ալ գիտնանք ճշմարիտ պատկերը մեր արիւնոտած երկրին, քաջութեամբ և շեշտակի կարենանք նայիլ անոր (...): Այս զգացումը մեծապէս դրդեց զիս որ, իբր ազատ քաղաքացի, իբր երկրին մէկ հարազատ զաւակը, հաւասար իրաւունքներով օժտուած, և հաւասար պարտաւորութիւններով բեռնաւորուած, առանց վերապահութեան գրեմ այս էջերը (...)*” (*Ավերակներուն մեջ/ Նախաբան*, Շիրակ հրատարակչություն, Բեյրութ, 1987, էջ. 13-14): Գիշտ է, այդ երկում Ձե-ն ամեն ինչ չի ասում: Ոմանք նույնիսկ համարել են, որ նա թաքցնում է կարևորը, հատկապես թուրքական որբանոցներում տեղավորված Կիլիկիայի հայ երեխաների թրքացման խնդիրը: Բայց այն փաստը, որ նա այդ խնդրին անդրադարձել է Միացյալ Նահանգներում հրատարակվող *Արագած*-ում¹¹ վկայում է, որ 1911թ առաջին

հրատարակության *Նախաբանում* “չասվածը” բացատրություն ունի: Նախ, ՁԵ-ն պետք է ապահովեր իր անվտանգությունը, մյուս կողմից էլ խուսափեր վիճաբանության նյութ տալուց, որը կարող էր բացասական հետևանքներ ունենալ հայկական ազգաբնակչության համար: Անհրաժեշտ էր թվում նաև թուրքական դեմոկրատիան իր հաստատման ուղու վրա գերծ պահել հերթական “շեղումից” և այդ ամենն անել առանց հրաժարվելու ճշմարտորեն վկայելուց: Այն որ ՁԵ-ն չի դավաճանել հանցագործության (1909թ ջարդերի) և հանցագործների անպատժելիության մասին վկայելու իր առաքելությանը երևում է այս կարևորագույն նախադասությունից. *“...յերբ նշմարած եմ չպատժուած ոճրագործներու նայուածքին լրբութիւնը, հաւատարմօրէն արձանագրած եմ զանոնք առանց հոգ ունենալու այն պայմանադրական բանածելուն...”* (*Ավերակներուն մեջ/Նախաբան, էջ 12*): Այսպիսով ՁԵ-ի ստեղծագործության մասնագետ Լևոն Քեչեյանը կարող է գրել. *“Ինչ վերաբերում է մեզ, ապա մենք համարում ենք, որ Ձապել Եսայանը իսկապես ուզում է տալ աղետի իրական պատկերը”*:¹²

5. Օգտակար լինել

“Բան մը ընել, բայց ի՞նչ” իրենք իրենց հարց են տալիս ՁԵ-ի դասընկերուհիները, որոնք տոգորված են իրենց *“տափակ կյանքը”* փոխելու մտահոգությամբ: (*ՄՊ, էջ 525*): Նրանք դիմում են ՁԵ-ին, որն արդեն սկսել էր պոեններ գրել. *“Ինչ որ կհուսային ինձմե իմ ընկերուհիներս, այն էր, որ ես գրեի այն նյութերուն վրա և վերջապես բան մը ընեի, բայց ի՞նչ. չէինք կարող բանաձևել”* (*ՄՊ, էջ 525*): *“Ես որոշակի կզգայի, որ գրականությունը զարդ մը, պերճանք մը չի, գերագույն ծաղիկ մը - ինչպես կըսեր Չոպանյան, այլ զորավոր միջոց մը, զենք մը, որուն կուզեի տիրանալ պայքարելու համար այն բոլոր բաներու դեմ, որ կհամարեի անարդար”* (*Ի., էջ 69*): Նաև *“...կմտածեի, որ եթե կարենայի պատկերացնել այդ հակասությունները, դիմակազերծ ընել մարդիկը, շատ օգտակար գործ կատարած կըլլայի”* (*Ի., էջ 69*): ՁԵ-ն դա ուղղակիորեն է ասում, նրա և նրա ընկերուհիների համար գրելը նշանակում է գործել, նշանակում էր “օգտակար” լինել հասարակությանը: Այլ կերպ ասած, գրողը իր հստակ դերն ունի հասարակության մեջ: Ավելին, չկա գրող, ներգրավված գրողից (*scrivain engagé*) բացի, և նրա գրվածքների մասին կարելի է դատել, ելնելով նրա ներգրավվածության չափից: ՁԵ-ն դա ցույց է տալիս *ՄՊ*-ի այն հատվածում, ուր նա խոսում է 1890-1900թթ մոդայիկ կանացի գրող Սիբիլի¹³ մասին. *“Կարդացել էի Սիպիլի վիպակները և բանաստեղծությունները և այն ժամանակ հանդգնություն ունեի չհավանելու այդ սեռի գրականության, հակառակ ընդհանուր հիացումին: Ես այն կարծիքը ունեի, որ ժամանակներու մեծանուն բանաստեղծուհին չնչին և անկարևոր նյութերով կզբաղի: Իմ մտավորական նորագարթ և մեծ ախորժակս հագուրդ չէր գտներ այդ գերանուրբ փափկություններով:”* (*ՄՊ, էջ 526-527*): Յետևաբար ՁԵ-ի համար չկա չինաստավորված, դատարկ գրականություն: Գոյություն ունի միայն օգտակար գրականություն: Այս գաղափարը նա ցայտուն կերպով արտահայտել է *Ավերակներուն մեջ*-ում մի ընդարձակ նախադասությամբ, ուր *“յեթե կրցա”* արտահայտությունը նա օգտագործում է որպես կրկներգ, որպեսզի ցույց տա, որ գրելը նա ընկալում է որպես *“ընդհանուր Չայրենիքին”* մատուցված *“ծառայություն”*. *“Յեթե կրցա պատկերացնել (...), յեթե կրցա արտահայտել (...) Յեթե նաև կրցա անկեղծորեն ըսել (...), կհավատամ թե ծառայություն կրցած եմ ընել ընդհանուր Չայրենիքին”* (*Ավերակներուն մեջ, էջ 13*):

ԱՄՓՈՓՈՒՄ

Այս ուսումնասիրության վերջում, մենք ուզում ենք ավելացնել, որ ՁԵ-ի երկերից ստացվում է, որ արտահայտվելու ազատությունը իրավունք է, որին պետք է հասնել

թե՛ անձնական, թե՛ խմբային բուռն պայքարով, իսկ այն պահանջում է քաջություն և համառություն:

- Քաջություն. “Բարձրաձայնելու պարտքը” կատարելու համար անհրաժեշտ է ուժ ունենալ՝ հակադրվելու այն ամենին, ինչ ասում, ինչ անում և ինչ մտածում են մարդիկ, ազատվել պայմանականություններից և քաղաքավարության կանոններից, դիմադրել տիրող մտայնությանը, եթե այն չի համընկնում սեփականի հետ, պաշտպանել սեփական կարծիքը, եթե այն հակառակ է մեծամասնության կարծիքին: Արշակունիու պես երիտասարդ աղջիկը չդարձավ “մեծ” գրող, որովհետև նա չունեցավ այդ քաջությունը. *“չէ հասած իր հատկություններու լրիվ զարգացման: Շատ վախկոտ էր և զգույշ և իր գլխավոր հոգն էր որևէ բանով չի խրտչեցնել հասարակությունը:”* (ՄՊ, էջ 528)¹⁴ Այստեղ կարևոր չէ իմանալ թե ՁԵ-ի կարծիքն իր դպրոցական ընկերուհու մասին արդարացի է, թե ոչ: Կարևորն այն է, որ ՁԵ-ի համար քաջությունը գրողի կարևորագույն հատկանիշներից մեկն է: Իսկ ՁԵ-ն այդ հատկանիշը դաստիարակում էր իր մեջ մանկուց: Փոքր ժամանակ նա երբեք չէր ենթարկվել լռության կանոնին, որը պարտադրված էր տանը առավոտյան և նա ազատորեն դիմում էր հորը, որը *“համբերությամբ ու սիրով կպատասխաներ իմ բոլոր հարցումներուս, և իզուր մորաքույրերս կտրտնջային, որ “առտվանցով աղքատ կխորաթիմ”*”: (ՄՊ, էջ 435): Համարձակվելով խոսել հոր հետ, նա համարձակվում էր նաև դուրս գալ տանից: Քաջությունն այդ դեպքում կայանում էր նրանում, որ նա գերադասում էր ջուր բերել հասարակական աղբյուրից և ոչ թե իրենց պարտեզի երկու ջրհորներից, ինչպես նաև իր մորաքույր Երանիկի հետ զնում էր “ստորին թաղերը” (այսինքն Սքյուտարի աղքատ թաղերը) և շփվում աղքատ սոցիալական դասի հետ, չվախենալով ընտանիքի և հարևանների քննադատությունից նման այցելությունների համար:

- Համառություն. Գրողի մեկ այլ հատկանիշը պետք է լինի համառությունը, որովհետև պայքարը մշտական է. *“Իմ անհատական տրամադրություններս կհանդիպեին բուռն դիմադրություններու և ես կպայքարեի անընդհատ ֆիզիկապես և խելքով: (...) Կպայքարեի տնեցիներու դեմ, դպրոցին դեմ, իմ տարեկիցներու դեմ, անդուլ, անդադար:”* (ՄՊ, էջ 494):

ՁԵ-ի երկերի ընթերցանությունը պարզորոշ ցույց է տալիս, որ ազատությունը չափվում է խոսքով: Այդ տեսակետից դրանք շարունակում են ակտուալ մնալ: ՁԵ-ն մեր կարծիքով “ժամանակակից” կին է, որն այսօր, անկասկած, կնկարագրեր ժամանակակից հայ հասարակության համրությունը և դրա բռնակալական դրսևորումները, կվկայեր անհավասարության, անարդարության, ազատության դեմ արվող ոտնձգությունների և հանցագործությունների մասին, կնկարագրեր մեր օրերու “աղետը”: Նա ոչ միայն գրքեր կգրեր, այլև հանդես կգար թերթերում և կհամագործակցեր ՄԻԿ-երի հետ, քանի որ ուներ Մարդու Իրավունքները պաշտպանելու հակում, որոնց օգտին նա հետաքննություններ կվարեր: Եվ նա կշարունակեր բացահայտել առասպելի գերիշխանությունը հայերի շրջանում որպես մի ցավ, որից հայերը պետք է ձերբազատվեն: Ի վերջո նա կլիներ ներգրավված գրող և նույն այն պատճառներով, ինչ իր ժամանակաշրջանում:

Սեդա Սավյան

ՀՂՈՒՄՆԵՐ

¹ Սիլիհտարի Պարտեզները (ՄՊ)

Առաջին հրատարակություն. Սիլիհտարի Պարտեզները, Պետհրատ, Երևան, 1935
Երկեր, Հայպետհրատ, Երևան, 1959, էջ 393-529

Les Jardins de Silihdar, Albin Michel, Paris, 1994 (թարգմ. Պյեռ Տեր-Սարգսյան)

² **Ինքնակենսագրություն**

Առաջին հրատարակությունը *Սովետական գրականություն*՝ ամսագրում, 1979թ. սեպտեմբեր, Երևան, էջ 49-74 :

Ձեռագիրն անավարտ է : Ի սկզբանե ձեռագիրը կազմված է եղել 393 էջից : Պահպանվել է միայն առաջին մասը. որն իր հերթին ամբողջական չէ : Պակասում են սկզբի 230 էջերը, իսկ ընդհանուր կրուստը կազմում է 288 էջ. : Սակայն պահպանվել է երկի վերջը :

³ **Ավերակներուն մեջ**

Առաջին հրատարակություն, *Ավերակներուն մեջ*, Կոնստանդնուպոլիս, 1911

⁴ Տե՛ս *“Ձուգահեռ հրականություններ”* Արա Շիրինյանի կարճամետրաժ ֆիլմը, որը նկարահանվել է Եվրասիա հիմնադրամի հետ խոսքի ազատության թեմայով, ուր ներկայացված են երկու “չխոսկան իարս” Շենավան գյուղից (Արագածոտնի մարզ) :

⁵ *Երբ այլևս չեն սիրեր*, Օ. Արզուման հրատարակիչ, Կոնստանդնուպոլիս, 1914 :

⁶ Յրեա թիթեղագործի տեսարանը կարևոր է, որովհետև այն ցույց է տալիս կարեկցանքի զգացման սաղմնավորումը Ձե-ի մոտ. , «...առաջին անգամ թիթեղագործ անձանոթ հրեան իմ մեջ կարթնցնե գթության տանջալի և անագորույն զգացումը :» (ՄՊ, էջ 426) : Մինչ այդ , « Կհիշեմ, որ գուք և սեր ունեի անասուններու համար, բայց անգուք էի մարդոց նկատմամբ : Կարծես շրջապատված էի թշնամիներով... » (ՄՊ, էջ 80) : Յետագայում Ձե-ն կփորձի օգտագործել գրականությունը, որպեսզի ուրիշներին հաղորդակից դարձնի զոհերի հանդեպ իր կարեկցանքին (ջարդերի և Տեղասպանության վերապրողների, տեղահանվածների, որբերի և այլոց), միայն թե մի բան “ըրած ըլլա” և “օգտակար ըլլա” : “Ուրեմն ջանքս պիտի ըլլա (...) հաղորդակից ընել այն անսահման թշվառության որուն սև կյանքը ապրեցա երեք ամիսներ” (*Ավերակներուն մեջ*, Շիրակ հրատարակչություն, Բեյրութ, էջ 13) : Տե՛ս այս ուսումնասիրության III/5 մասը :

⁷ Այս չերկեսը ուզեցել էր վրեժխնդիր լինել բարեփոխիչ Միտիաթ փաշայի համար, որը շնորհագուրկ էր արվել 1881թ. Աբդուլ Յամիդի կողմից, իսկ այնուհետև 1884թ. սպանվել սուլթանի հրամանով :

⁸ *Ինքնակենսագրություն*-ում Ձե-ն գրում է նաև Աբդուլ Յամիդի կապակցությամբ. , “ *Տեղական հայ մամուլը ը պաշտոնական օրհներգություններ կը հրատարակեր Սուլթան Յամիդի , “արևշատության” համար, եկեղեցիի բեմեն մաղթանքներ կընեին իսլամներու խալիֆայի առողջության համար”* (Բ., էջ 64-65) : Կոստան Ջարյանը նույնպես առիթ է ունեցել ընդգծելու այդ կեցվածքը :

⁹ 1863թ. գրված այդ երեք պոեմները նվիրված են 1862թ. տեղի ունեցած Ձեյթունի առաջին ապստամբությանը : Դրանցից մեկը *Թաղումն քաջ որդվոյն* հատկապես տպավորել էր Ձե-ին : Յետագայում Ձեյթունը դարձյալ ապստամբել է՝ 1877-1878թթ. և 1895թ. :

¹⁰ Սրբուհի Վահանյան (1842-1901), գրող, որը դարձել է Սրբուհի Դյուսապ, ամուսնանալով ֆրանսիացի երաժիշտ Պոլ Դյուսապի հետ : Արշակունի Ջզմեջյան (1875-1922) : Յետագայում նա ամուսնացել է գրող Թեոդիկի հետ և վաղաժամ մահացել է թոքախտից շվեյցարական առողջարաններից մեկում :

¹¹ Տե՛ս *Կլիկիտ որբանոցները*, *Արագած*- ում, Նյու Յորք, 1911, օգոստոսի 17, օգոստոսի 24, օգոստոսի 31 և սեպտեմբերի 7 :

¹² Տե՛ս *L'Intranquille*, 6-7, Paris, 2001, p. 399 :

¹³ Սիբիլ (1863-1934) Ջաբել Խանջյանի գրական կեղծանունը, որը ծնվել է, ինչպես և Ձե-ն, Սկյուտարում (Պոլիս) և հաճախել է նույն վարժարանը : Ուսուցչուհի, գրող և դպրոցական դասագրքերի հեղինակ, նա գրականություն է մուտք գործել 1890թ. և շատ մոդայիկ է եղել մինչև 20-րդ դարի սկիզբը :

¹⁴ Տե՛ս 10- ը :